

րեն պ. Սալաթեանի աւելացրածն է: Իսկ յոգնակի թիւը կը հարցնէ պ. Սալաթեանը: Շատ բարի բայց ո՞վ ասաց, որ այդ երգի մէջ չնոյն իսկ արեգակն»: Նիւթական արեգակի ծագումն է: Այդ դէպքում խօսք չունինք, անհետ թիւ թիւն է ասել. «Արեգակի աչքերն էին արեգակներ»: Բայց երգի մէջ խօսքն արեգակի մասին չէ խօսքը, այլ մի պատանի աստուծու, այսինքն մարդակերպ աստուծու մասին, որ անպատճառ պէտք չէ, որ «քեալլագեօզ» լինի և միականի: Միթէ «քեալլագեօզ» և միականի է արեգական աստուած գեղեցիկ պատանի Ապոլոնը: Երբ միանգամ աստուածը մարդակերպ է, անշուշտ մարդու պէս էլ աչքեր, աչկունք պիտի ունենայ: Իսկ երբ աչկունքն արեգական հետ են համեմատուում, միթէ պ. Սալաթեանը չզիտէ, որ հայոց լեզուի քերականութիւնը պահանջում է, որ էական բայով ստորագրուող թուով համաձայն լինի իւր ենթակային և ասուի «աչկունքն էին արեգակունք», քանի որ իմաստն այն չէ, թէ արեգակն է այդ պատանու աչքերը, այլ աչքերն արեգակնանման էին: Անշուշտ, այս վերջին իմաստով կարող էր ասուել նաև «աչկունքն էին արեգակն»: Բայց չմոռանա՞նք, որ սա երգ է, և երգիչը մեզինք ու ձեզինք աւելի լաւ ճաշակ է ունեցել լեզուի երկու ձևից այն ընտրելու, որ ներդաշնակութիւն ունի և յատկապէս «արեգակունք» ձևը, որ «աչկունք» բառի հետ կազմում է նմանաձայնութիւն (alliteration), որ յատուկ է ժողովրդական երգերին և յատկապէս ինչպէս յետոյ կը տեսնենք, Վահագնի այս երգին:

Այս են պ. Սալաթեանի հիմունքները, որոնք ինչպէս ընթերցողը կը տեսնէ, ոչինչ ու ոչինչ չեն ապացուցանում թէ երգի արուեստական շինծու լինելու, և թէ երգի մէջ արեգակի ծագման նկարագիր տեսնելու նկատմամբ:

Երգի մէջ նկարագրուած պատանին և նորա ծնունդը մնում են և կը մնան որոշ չափով նման արեգակին և արեգակի ծագմանը, թէպէտ և ոչ յորենացին և ոչ երգը ոչ մի խօսքով ակնարկութիւն չեն անում արեգակի վրայ: Բայց մենք չենք համեմատել եր-

գի պատանին արեգական աստուածների հետ, քանի որ ինչպէս ասացինք, մենք Վահագնի անձնաւորութեան մէջ ոչ թէ արեգակն ենք տեսնում, այլ մի ուրիշ երեւոյթ՝ ամպրոպ: Այսպէս ըմբռնելով միայն հասկանալի է լինում երգի ամեն մի տողն ու բառը և Վահագնի կոչւել վիշապների հետ և վիշապաքաղ մակդիրը, և Վահագն անունը, և Հերակլի հետ նոյնանալը, և նոյն իսկ երբեմն Ապոլոնի հաւասար դրուելը: Բայց նախ քան այդ՝ մի երկու խօսք ևս մեր ապացոյցի եղանակի մասին:

Մ. ԱՐԵՂԵԱՆ

(նորոշումներ)



ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Der Armenische Volksglaube.—Manuk Abeghian, Leipzig, 1899. 8.^o 128 էր.

ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՈՏԸ—

ՄԱՆՈՒԿ ԱՐԵՂԵԱՆԻ.

Արարատի անցեալ համարում արդէն մենք յայտնել էինք այս գործի հրատարակութեան մասին և խոստացել մի քանի խօսք տուել: Պ. Արեղեան, որ մեր մէջ յայտնի է որպէս բանահաւաք իւր «Գաւթ» և Մհերով և որպէս գրող իւր այլ և այլ երկերով և յօդուածներով՝ սոյն գրքով կամենում է նկարագրել և լուստրանել Հայոց ժողովրդական հաւատը, օգտուելով մեր նախնի մատենագրներից և ժողովրդական նիւթերի ժողովածուներից: Ժողովրդական նիւթեր հաւաքելու գործի սկզբնաւորութիւնը նոր չէ մեզանում և արդէն բաւական գործ կատարուած է թէ և ոչ ըստ իմաստի սպառած և կարգաւորուած, բայց հում նիւթերից անտու թիւններ կազմել՝ լուստրանելով ըստ երեւութիւն անիմաստ և աննպատակ ծէսերն ու սովորութիւնները, անհասկանալի առասպելների և աւանդութիւնների ծագումը՝ համեմատելով օտար ազգերի մէջ եղած նման երեւոյթների և հաւատալիքների հետ, նորութիւն է մեզ համար: Այդ կողմից պ. Մ. Արեղեանը արժանի է խորին շնորհակալութեան այս շարադրութեան համար: Պ. Արեղեանից գրքի գլխաւոր արժանաւորութիւնն այն չէ, որ

նա ըստ կտրելույն աշխատել է ամփոփել այստեղ և այնտեղ ցրուած նիւթերը և մի ամբողջութիւն կազմել: այլ որ նա համեմատելով օտար ազգերի դիցարանութեան և հաւատալիքներին հետ, աշխատել է պարզել Հայոց առասպելներին ծագումն ու սկզբնական նշանակութիւնը: Գիրքը գրուած է դերմանացի մասնագէտների համար, ուստի և հեղինակը նկարագրելով Հայոց հաւատքին վերաբերեալ սովորութիւններն ու առասպելները՝ ակնարկներով է միայն անցնում օտար ազգերի վերաբերութեամբ գրած համեմատութիւններն ու նմանութիւնները: Հեղինակն աւելի ընդարձակ տեղ կտար անշուշտ վերջին մասերին, եթէ նա Հայոց համար գրած լինէր: Բայց նոյն իսկ հայ ընթերցողի համար գրքի իւրաքանչիւր գլուխը բազմաթիւ նորութիւններ է տալիս: Յանկալի էր, որ պ. Արեղեանցը իւր գիրքը ընդարձակէր և յարմարեցնէր հայ ընթերցողների համար, մանաւանդ որ գերմաներէնը քշելին է մատչելի, այսինքն գլխաւոր ուշադրութիւն դարձնելով զեանական համեմատութիւնների և տեսութիւնների վերայ, որով և մեծ օգուտ տուած կլինէր ժողովրդական բանահիւսութեան և հաւատալիքների մշակութեան:

Գիրքը նուիրուած է պ. Աղէքսանդր Մանթաշեանին, որի հաշուով ուսել է հեղինակը համալսարանում, և բաղկացած է 11 գլուխներից:

ա. Հայոց ժողովրդական հաւատի աղբիւրներն ու ընդհանուր յատկութիւնները:

բ. Հոգու և ննջեցելոց հաւատ:

գ. Լոյս և խաւար:

դ. Ճակատագրի հաւատ:

ե. Զրի և բոյսերի պաշտամունք:

զ. Կրակի պաշտամունք:

կ. Օձերի պաշտամունք:

լ. Փոթորիկի առասպելներ:

ր. Հոգմե ոգին (Der Windgeist)

ժ. Զրի և սարերի ոգիներ

ժա. Պախարգութիւն և չար ոգիներ:

Հայոց վկայաբանական մատենագրութեան և ընդհանրապէս ժամանակագրութեան պատմութեան համար հետաքրքրական գործ է Պետերբուրգի լեզուաբանական ճիւղի եօթներորդ վեցամեակի ուսանող Նիկողայոս Ազոնցի աշխատութիւնը—Армянский Сборникъ житій святыхъ въ послѣдней литургической редакціи Григорія Церенца—որի համար երևաաարդ հեղինակը արժանացել է ոսկէ մեդալի: Թէև այս աշխատութիւնը դեռ ևս տպուած չէ, որ պէտք է կատարուի համալսարանի հաշուով, բայց հետաքրքրական ենք համարում մի քանի տեղեկու-

թիւն տալ այս երկի մասին՝ քաղելով համալսարանի վարչութեան տարեկան հաշուետուութիւնից:*

Հեղինակը իւր խնդիրը հիմնաւորապէս մշակելու համար հարկ է համարել ուսումնասիրել Հայոց եկեղեցու մէջ գործածուած հնագոյն վկայաբանութիւնների խմբագրութիւններն ու ժողովածուները, որոնց հետ կապ ունին և վերջին Յայսմաւուրները: Այս նպատակի համար հեղինակն անձամբ օգտուել է Վենետիկ և Վիեննայի հարց մատենագրարաններից և լրացուցիչ տեղեկութիւններ է ստացել Մայք Աթուռի մատենագրարանից, Հայոց լեզուով մնացած ամենահին տոմարը կաթուղիկէ եկեղեցու տօներով՝ համարում էր Դ. դարու գործ, որ Պապագոյովիկայից Հայաստան պէտք է անցած լինէր: Բայց հեղինակը մանրամասն քննութիւնից յետոյ այն եզրակացութեան է հասել, որ այդ տոմարը ծագել է Երուսաղէմում և Հայաստանում գործածութեան մէջ է մտել ԺԱ—ԺԲ դարում: Իսկ Հայոց տօների համար մինչև է. դարը ընդհանուր ուղեցոյց չէ եղել, այլ Հայոց սրբերի տօնակատարութիւնները կապուած էին տաճարների տօների հետ: Առաջին անգամ այս գործը շարժական տարուայ համաձայն կարգաւորուել է է. դարում և մեր ձեռքն է հասել Ը. դարու խմբագրութեամբ: Երբորդ խմբագրութիւնը, որ բիւզանդական է, հռոմէական ամիսների անուններով, կատարուած է Ժ.—ԺԱ դարում:

Միացեալ տոմար (сводный календарь) կազմուեցաւ ԺԲ. դարու կէսերին, որի մէջ գործադրուեցաւ և Ը. դարու խմբագրութիւնը. իսկ Հայաստանի նորագոյն սրբերի տօները չներմուծուեցան այս տոմարի մէջ, թէև շատերն ընդունուած էին Հայոց հայրապետների կողմից: Հայաստանում գործածուած երեք տեսակ Յայսմաւուրներ յառաջ եկան. Ը. դարում կազմուեցան Հայոց սրբերի վարձագրութիւնները—Ճառընտիրները—առաջին տեսակ տոմարի համաձայն: Ընդհանուր սրբերի համառօտ վարձագրութիւններ յունարէնից թարգմանուեցան ԺԱ—ԺԲ դարում: Երբորդ խմբագրութիւնը, որի մէջ մտան և Հայոց սրբերի յեշտատկութիւնները, կատարեց Տէր Իսրայէլը ԺԳ. դարում: Տէր Իսրայէլի Յայսմաւուրքը երկու նոր խմբագրութիւն ունեցաւ կիլիկիան շրջանում, առաջինը Պերակոսի ձեռքով (հաւանորէն Պերակոս Գանձակեցին), իսկ երկրորդը Գրիգոր Անաւարդեցու: Վերջին խմբագրութիւնը կատարեց Գրիգոր Ծերենց ԺԳ—ԺԷ. դարում իւր կողմից 24 նոր նահատակների վկայաբանութիւններ աւելացնելով:

* Годиный Актъ имп. С. Петербургскаго университета, 1899 8-го фев.

Բանասիր. Հանդես նմախոսական, պատմական, լեզուաբանական և լեզվական, Հատոր Առաջին, Ա. գիրք, 1899. Պարիս.

Պ. Բառմաջեան Բանասիրի հրատարակութեամբ հայագիտութեան համար աշխատելու մի շատ կարևոր ասպարէզ է ընտրել հրատարակել

1. մեր ազգային հնախօսութեան, պատմութեան և մատենագրութեան վերաբերեալ հետազոտութիւններ, արդի քննական տեսութեանց համեմատ.

2 «Հայկական» պարսկական, ասուրական (Ասորեստանեայց) բարբելոնեան շոշական (Ելեմացոյ) բեհապարաց» այն մասերի թարգմանութիւնը, որ հայոց է վերաբերում.

3 Հեռագիրների ցուցակներ՝ վիեննացիների հետևողութեամբ.

4 «Հայերէն լեզուի ձայնարանութեան և ստուգարանութեան վերաբերեալ և դասաւարտագրութեանը ուսումնասիրութիւններով ըզբաղիլ»:

Այս ծրագրի համեմատ, վիճաբանութեամբ, հրատարակուած է արդէն առաջին հատորի առաջին գիրքը, որից և կարող ենք գաղափար կազմել ձեռնարկած գործի կարևորութեան մասին: Առաջին և կարևոր յօդուածներից մէկն է պ. Բառմաջեանի «Գարեհի արշաւանքն և Հայոց» վերնագրով յօդուածը: Հեղինակը նախ Գարեհի այլ և այլ արձանագրութիւնների հիման վերայ բացատրում է մեր երկրի նախկին անուանակոչութիւնը, համառօտ տեսութիւն է անում նորա նախապատմական շրջանի մասին և ապիւն է Գարեհի երեք արձանագրութիւնները՝ Պերսեպոլիսի, Նաբչիի Ռոստամի գերեզմանոցի և Բեհուստանի ժայռի — ընագիրներով, ընթերցողաւորներով և թարգմանութեամբ:

Այնուհետև միմեանց հետևում են հետևեալ յօդուածները. Մեհասան Մանուկի թարգ. յուն Ս. Յ.—Հայոց դիրք Վրաց քաղաքաւորական մէջ Պրոփ. Խախանովի. Հայերէնի ներդաշնակութեան աստիճանը քաղաքական հաշուով.—Հ. Անուեանի. Տերսիցիի Վայծոռիկի. Յուց. հայերէնի մեղացոյց ազգային մասնագիտական Պարիսի շարունակելի Կ. Յ. Բ. Մովսիսի Խորենացոյ Հայոց Պատմութիւնը ուղղագրեալ և ծանօթարանեալ—Սուքիաս վարդ. Պարոնեանի. Մասնախօսական նոր հրատարակութիւնը և Չայն Միլիտերեան տեղեկ. Տեղ. Փրեզերիկ Միլլերի մի նամակը:

Առանձին ուղղագրութեան արժանի են Պ. Անուեանի և Հ. Պարոնեանի յօդուածները: Պ. Անուեանը զարմանալի համբերութեամբ զանազան գրքերի հատուածների տառերը հաշուելով նոցա գործածութեան տախտակն է կազմել հայոց լեզուի մէջ: Իսկ Հ. Պարոնեանը մի մեծ

գործ է սկսել. ոչ միայն ուղղագրել Խորենացու ներկայ ընագիրը, այլ և պարզել հեղինակի անձի և ժամանակի վերաբերեալ մատենագրական խնդիրներ: Հ. Պարոնեանը որքան սրամիտ ու գիտնական բացատրութիւններ և սրբագրութիւններ տալու լինի, բայց և այնպէս մեզ համար աւելի պակաս նշանակութիւն կունենան նորա եղբակացութիւնները, քանի որ Հեռագիրների համեմատութեան վերայ չեն կատարուած: Ուրախալի է այն լուրը, թէ Բանասիրի մէջ պիտի հրատարակուի Հ. Պարոնեանի շահեկան մեծ գործը՝ Մասնագրանքը, որի վերայ քսան տարուց է վեր աշխատում է հ. գիտնականը:

Լոյս է տեսել Պ. Մառի մագիստրոսական եռահատոր մեծ շարագրութիւնը՝ Сборники Плитъ Вардана, Материалы для Исторіи средневѣковой Армянской Литературы. I. II. III. С.-П. Այս նշանաւոր աշխատութեան մասին կիսօրենք ուրիշ անգամ:

Մեր միաբանակից և ընկեր Հ. Տերայր վարդապետը թարգմանել է և տպագրութեան համար պատրաստ ունի պ. Եղեանցի Сношенія Петра Великаго съ Армянскимъ народомъ գրքի յառաջարանը, այսինքն պ. Եղեանցի ուսումնասիրութիւնը փաստաթղթերի վերայ հիմնուած: Յեղորական վարչութիւնից իրաւունք ստանալուց յետոյ կսկսուի գործի տպագրութիւնը:

Գ. Վ. Յովսէփեան

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԸ

Ապակի գործուածքներ.—Եգիպտոսի ապակու հին գործարաններում գեո Բրիտոսի ծննդից զարեւր առաջ, կարողանում էին ապակուց թել քաշել, իսկ նոյն նիւթից թելեր մանելու արդի նոր եղանակը փոխ է առնուած Վենետիկի ապակու նախկին արհեստանոցներից, Այդ վարպետութիւնը, ինչպէս յայտնի է, նրա մէջն է կայանում, որ ապակէ ձողիկի կրակի վերայ տաքացրած ու փափկացրած ծայրը ամրացնում են մանող անուի մի որ և է մասին և իսկոյն արագ պտտում են անիւը: Այդպիսով ապակէ ձողիկից բարակ թել է ստացուում, որը շատ շուտով սառչում է օդի մէջ ու փաթաթւում անուի շուրջը:

Մի քանի տասնեակ տարի սրանից առաջ արդէն գոյութիւն ունէին այնպիսի մետաքսէ գոր-